

473

444

մի. 891.99-13  
կա 99  
1480

մարդու բականանց

14664.

# ԹՈՍՈՄ ԵՒ ԱՅԼՄԱՆ

ԳԵՐԲՆԵԿՆ ՈՅՓ ԱԽԵՑՈՂ ՀԱԿԵՆԵՐ

(Տաճկահայոց ժողովրդական աւանդութիւն)


Կենտրոնական գրադարան անդամակցութեան համար

գոր. Բակու

ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 Г.

«Գնաց բարով, որդիս, բայց չընոռանաս  
«Մեզ է ճանապարհ, նեղութիւն հագար.  
«Գնաց, անխնայ թափիր քո արեան  
«Մինչ վերջին կաթիլ ու յետ մի դաս-  
նալ...

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԻՆ



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մովսէս Վարդանեանի

Տպոգրաֆիա Մ. Վարդանյանց

1896

(963)

473-62

Дозволено Цензурою, Тифлисъ, 11 Апрѣля 1896 г.



3308  
ЧО

ԻՐ ՄՈՐԵԴԲԱՅՐ ԵՒ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ

ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

## Պ. ԱՐԵՍԿ ԾԱՏՈՒԹԵԱՆՑԻՆ

Ա Ն Կ Ե Ղ Ճ Ա Մ Ր Տ Ո Վ

Ն Ի Ք Ր Ո Ւ Խ

հեղինակը:

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

I.

Ծառ վաղոց, դեռ դպրոցական-նստարանական կեանքից սկսած, զգացում՝ էր իմ մէջ «Ռոստոմ» եւ Սալման» անունով սոյն զբքի հրապարակ հանելու միտքը, բայց անվատահ լինելով մտաւոր ոյժերիս վրայ՝ քարտք համարեցի առ ժամանակ յետաձգել տպագրութիւնը։ Վերջապէս ուրախ եմ, որ գէլ այժմ՝ յաջողեց ինձ ձեռնամուխ լինել սոյն զբքի հրատարակութեան։ Թո՞ղ աւելորդ չընամարի սոյն գրածքը մի երիտասարդ հեղինակի կողմից, որ, թէեւ չէ շտապել ուսանողական շրջանում իսկ նւիրել հատարակութեան, սակայն այսօր յարմար է դատել հրատարակել նոյնութեամբ, առանց որի է փոփոխութեան։ Ես կարող էի սրան գեղեցիկ կերպով կոկել եւ ննջարկել հիմնական փոփոխութեան, ուսկայն ես այդ չ'արեցի՝ ինձ համար թանգ արժենալով աշակերտական ժամանակից արտայայտած գաղափարներն ու զգացումները տևանել

իսկութեամբ տպագրած. այդ իսկ պատճառով հրատարակութեան տոի սոյն զիջը նոյնութեամբ, որպէս հայելի և գրաւական իմ պատանիկական հասակում ունեցած զիտութեան։ Եւ թո՛ղ լինի իբրեւ մի խոստում անկեղծ եւ նշան յուսալի՝ թէ ներկայում եւ թէ այսուհետեւ ապագայում՝ իմ մտաւոր կարողութեան շափահաս ժամանակ աւելի սրտեռանդն աշխոյժով աշխատելու եւ մարդկութեան, հարազատ ազգի, հասարակական եւ գրական շահի եւ օգսի համար ձեռք եկածին չափ լինել պիտանացու։ Թէ որքան է նըստիս յաջողւել դիցազնական եւ հսկայական պատմածներով լի պարսկական այս լեզենդան վերածել հայկականի՝ թողնում եւ ընթերցող հասարակութեան դատել, իսկ ես յուսով եմ, որ մեր մանուկ հայ գրականութիւնը սիրով կընդունի իր զանձարանի մէջ աշակերտական շրջանում երկասիրած դեռահաս՝<sup>1)</sup> գրողի այս փոքրիկ լուման...

## II.

Բայց մի հանգամանք։ Այս հետաքրքիր լե-

<sup>1)</sup> Այս երկը գրելիս ես այն ժամանակ տասն և հինգ տարեկան էի, ոչ աւելի։

գենդան, ինչպէս ընթերցող դասը նկատեց վերյիշեալ տողերից, ես ինքնաբերազար հայացինել եմ՝ վերածելով՝ փոխանակ պարսից՝ Տաճկա-Հայոց ժողովրդական ասանդութեան՝ նիւթն աւելի մատչելի եւ հետաքրքրական դարձնելուն սպատակով։ Բուն նիւթից շեղւելով՝ ես աւելացրել եմ՝ իմ կողմից «Ճովինար», որ, թէեւ կանացի, բայց մի գեղեցիկ-օրինակելի տիպ է վեհութեան եւ քաջազնութեան... ՚Ի դէպ՝ պէտք է նկատել եւ այս, որ Հայատանի շատ զաւաններում, մանաւանդ ծերերի մէջ, արմատացած է տակաւին այն աւանդական եւ առասպելական խորին համոզունքը, որ՝ իբր թէ ճովինարը-Ռոստովի քոյքը՝ համաձայն իր հօր—Զալ փառլեւանի պայմանական ուխտազրութեան՝ կոյս մնաց մինչեւ վերջը եւ պարսից Սալմանի ծեռքը չընկնելու համար հրեշտակից վերեւ բարձրացած՝ ապրում է դեռ մինչեւ այսօր էլ երկնքի խորքում։ Պատմում են, որ երբեմն մութ ակնակիք զիշերներին նա յանկարծակի հանում է զլուխը ամպերի տակից եւ նայում դէպի ցած, պատերազմական դաշտը, ոիտելու Ռոստովի եւ Սալմանի կոփ վախճանին, բայց հսկաների գործադրած ահագին զէնքերից վեր բարձրանալով կրակային, շանթալից եւ ահեղառոտ փայլմունքներ եւ հրավառ կայծեր՝ երկիրից կրկին թագցում է նա զլուխը ամպերի տակ եւ ապա նորից երե-

տուժ երկնակամարի վրայ՝ վայրկենական լուսով  
լուսալորելով ամբողջ աշխարհը—սա՛ր, ձո՞ր եւ  
անտառ:

Այժմ էլ սովորութիւն կայ զիւղացիների  
մէջ, որ այդպիսի ժամանակներին ասում են  
«երկնքում ծովինարը խաղաց»... ծովինարը իր  
վայրկենական լուսափայլութեան համար այնու-  
նետեւ կոչւեցաւ «Փայլակ». իսկ Ռուսոսում եւ Սալ-  
մանի մասին աւանդութիւնը պատմում է, որ  
նրանք դեռ երկրի մի ծայրում՝ իրար հետ կուռու-  
են սաստիկ եւ դեռ նրանցից ոչ մէկը չէ կա-  
րողանում յաղթութեան կանաչ դափնիներին ար-  
ժանանալ։ Այսպէս, տարենը մի-երկու անգամ,  
երբ նրանք նորոգում են կատաղի ճակատամար-  
տը, երկիրը դողալով նրանց հուժկու ոտքերի  
տակ եւ սարսափելի կուից սասանած՝ շարժում-  
օրօրուում է եւ այդ պատճառով երկրաշարժ է  
առաջ գալիս...

Իբրեւ վերջին խօսք, լիսայոյս եմ՝ զըքիս <sup>1)</sup>  
թերութիւնների մասին ընթերցող դասի ներո-  
դամտութեան վերաբերմամբ, որպէս առաջին  
փոք իմ հրատարակելիք տաղաչափական-բա-  
նաստեղծական գրութիւնների մէջ։

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԵՍԵԱՆՑ

<sup>1)</sup> Թէկ յանկալի էր արձակ ոճով դրել...

ԵԿԵԿ.

## Դուստոմ եւ Սալման

ԳԵՐԲՆԱԿԱՆ ՈՅՏ ՈՒՆԵՑՈՂ ՀՍԿԱՆԵՐ

(Տաճկահայոց ժողովրդական ասանդութիւն)

### I

Պատ դարեր առաջ մի թաղաւոր կար,  
Վեհանձն հոգով, ազնիւ ու արդար.  
Մի անտառաշուրջ սարաւանդ երկրում  
Հին ժամանակներ եղել է ապրում։  
Սնունդ կոչւում էր Զալ-փահլեան,  
Կութքը լայն դրսով վահանի նման,  
Տեսքը վիթխարի, հասակն վայելուչ,  
Քիմի արծրւային, դէմքը աշալուրջ,  
Չայնը աղդարար, նայւածքն ահոելի,  
Ոյժ է ունեցել շատ զարմանալի...  
Աչքերն ու յօնքեր սնորակ, խոշոր,  
Չեռքերն ու ոտքեր և մարմին բոլոր՝  
Իբրև լեռնային ահսպին գօտի,  
Նմանւում էին մէկ-մէկ մարդակի,

Դէմքը դաժան էր և շատ ահոելի,  
 Խնքը աժդանա և զարհուրելի.  
 Ի՞նչ հակայ-դիւցազն մարդ պէտք է լինէր,  
 Որ վրան նայէր, լեղին չըցամքէր.  
 Շ, Աստւած շանէ, թէ որ բարկանար  
 Զարդ-փշուր կանէր ամեն բան իսպառ...  
 Երբ նա շրջում էր մտքի ծովն ընկած՝  
 Մի ժայռ ահազին ելնում էր գիմաց,  
 Խսկոյն վերցնում էր հիմնովին պոկում,  
 Դէպի ովկեանոս, ծովեր շպրտում.  
 Խսկ, եթէ սար էր հանդէպը գալիս՝  
 Թեքում էր մէջքը ու ճանփայ տալիս.  
 Սյսպէս ամեն բան ընութեան միջին  
 Ընկճում էր նրա դօրաւոր կամքին...  
 Նրա ձայնն այնքան բարձր էր ու ահեղ,  
 Որ յայտարար էր լինում ամեն տեղ.  
 Երբ, ըստ սովորութեան, նա էր էների  
 Յետքից վազում էր, որ նրանց բռնի,  
 Սակայն չէր համնում իր նպատակին՝  
 Կանգնում էր այնպէս բղաւում ուժգին  
 Որ հէնց գիտինաս հըրաբուխ ժայթքեց,  
 Ժայռերի միջից զետ զահավիժւեց.  
 Ողջ շրջակալքում փոթորիկ թնդաց,  
 Անդունդների մէջ առիւծ մոնչաց,  
 Լեռներ ու ձորեր վլատակւեցան,  
 Երկինք ու գետինք իրարով դիպան...



II

Ի այլ աշխարհում քաջ ու զօրաւոր  
 Կենում էր պարսից Սալման թագաւոր.  
 Նա ունէր անթիւ արծաթ ու ոսկի  
 Եւ տէր նւածած շատ քաղաքների:  
 Երկրի մի ծայրում նա զօրքով նստած՝  
 Կէս մասն աշխարհի իր ձեռքն էր ձգել,  
 Եւ ամենուրէր սարսափ ազղելով՝  
 Իր չորս բոլորտիք գերի էր դարձրել.  
 Նա ոյժի կամքով տուգանք ու հարկեր  
 Թագաւորների վրայ էր գնում.  
 Հարստահարում խեղճ ժողովրդին,  
 Իր վառք ու անւան ծառայ էր դարձնում.  
 Իսկ խռովարար բանսարկուներին  
 Իրրե բռնակալ՝ շլթայում, գերում,  
 Իր դէմ յանդնող գոռող կայսերաց՝  
 Սշտարակների ճակտից բնեռում...  
 Արամազդ<sup>1)</sup> աստւած չնորհել էր նրան

1) Արամազդ՝ քաջութեան աստւածը, ինչպէս քնոյ  
 աստւածը՝ Մորփէոսը, գեղեցկութեանը՝ Ասկիամայրը, Աստ-  
 վիկ դիցուհին, ինչպէս ծեր Կռենոսը, որին յունացիք ի-  
 րանց հեթանոսական կրօնի մէջ պատկերացնում են նրան  
 ալկոր մարդու նման, մանգաղը ձեռին՝ մահու աստւած...

Աներկիւս ողի, սիրտ արիական,  
Եւ՝ անյաղթելի ոյժ-կարողութիւն,  
Եւ՝ հերոսական անհաս զօրութիւն,  
Լայն ու հաստամիս, ամուր թիկունքներ,  
Երկայնաբազուկ և հուժկու կռներ,  
Որ թէ ուզենար աշխարհ կըքանդէր,  
Սշխարհ կըքանդէր, լեռներ կըճեղքէր.  
Նրա ուազմավար, վեհ ուղաքներին,  
Նետ ու աղեղին, գէնք ու զրահին  
Տըւած էր թռիչք, որ զոռ թշնամիք  
Լինմն Սալմանին արեան ծարաւիք,  
Որ հրոսակներին՝ դժխեմ, ահարկու,  
Քչէր ու վանէր իր երկրից հեռու...

III

**Մ**ի անդամ Սալմանի ծննդեան օրին  
Մոտեցաւ նըրան Բահրամ ծերունին  
Գեղեցիկ, մաքուր շորով զարդարւած  
Ելնորհաւորեց նրա տարեղարձ.  
Եւ հանդիսաբար նա ոտքի կանգնեց,  
Սալմանի առաջ խօսել սկսեց.  
— Ի՞նչ փոյթ, թագաւոր, քո այդ պալատներ,  
Սյդ կամարակապ, բարձր մենարէթներ,  
Չորս կողմը զոռող բուրգերով պատած,  
Ողջ գոհարաշէն քարերից ձուլած,—  
Երբ քեզ այս երկրում մի բան է պակաս,

Ա՛յս, ինչպէս ասեմ, որ գու հասկանաս.  
Միթէ շլդիտես, որ երկրիս վըրայ  
Սէրից գովելի աւել բան չըկայ.  
Ի՞նչ է, ասա, քո բախտաւորութիւն,  
Թէի գու ունես մեծ հարստութիւն,—  
Երբ քեզ մօտ չունես հարսնացու կամ կին  
Զալփահնեանի գուստը ծավինարին...  
Գիտես, Սալման, ի՞նչ է Ծովինարը,  
Ոչինչ նըրա մօտ Ոսկիամայրը,  
Աղջկերանց զարդն է, աշքն է աշխարհի,  
Փարթամով վարդը զարնան օրերի,  
Անժառամ ծաղիկ գետնի երեսին,  
Երկնքի տակին միակ գեղունին...  
Ի՞նչ աչք պիտ լինի՝ նրա կերպարանք  
Որի է բանի հետ նմանացնի.  
Ի՞նչ ճարտար լեզու, որ գէթ կարենաց  
Նըրա գեղութեան քառորդը պատմի.  
Չընայելով, որ գուստը է արքայի՝  
Հպարտութեան իսկ նշոյլ չես գտնի,  
Ամենքը նրա արեով խնդում,  
Նրա անունով ողջ աշխարհ երգւում.  
Նա, կայ ժամանակ, որ չէ ծիծաղում՝  
Կարծես կարմրագոյն վարդեր է փռում,  
Նուրբ շրթունքներից ոմքիւլ բաց վինում,  
Երեսից լուսոյ շողեր վէր թափւում,  
Բերնի վրայ քաղցր ժոլիտ է ծաղկում...  
Ա՛յս, Սալման, Սալման, որ մէկը յիշեմ,

Կամ մրը թւեմ, պատմել սկսեմ.  
Նրա լուսեղին, պայծառ հայեացրը,  
Որպէս պարզ, անամպ, չըքնաղ երկինքը,  
Նրա դուրեկան և անոյշ պատկեր,  
Տականակադոյն, գրաւիչ աչեր,  
Եւ՝ քաղցր լնզուն, և թովիչ, մեղմ ձայն,  
Ուսին ծածանող մազեր թուլս, երկայն,  
Երկնային դէմքը, տեսիլն գերբնական  
Եւ գեղեցկութիւն հրեշտականման,  
Ծկ սաթի նման փայլող յօնքեր խիտ,—  
Քոլորը, բոլոր թուցնում մարդու միտք.  
Եթէ դու տեսնես նրան, ով Սալման,  
Իսկոյն սրտիդ մէջ, կայծակի նման,  
Խոր կըթափանցեն կրքերի շանթեր,  
Եւ կեանքդ նրան կրքերես նըւէր՝  
Որ գէլժ ոտքի տակ լինիս պատւանդան...  
Նա պէտք է լինի քո ամուսինը,  
Որ գառնաս Սուլթան դու առաջինը.  
Որ նախանձելի թըրւաս ամենքին,  
Հասած բախտի ծայրն ամենավերին... .

IV



» շատ երկիներ շրջել եմ, պտտել,  
Տատ օտար տեղեր ոտքի տակ տւել,  
Տատ ծով ու ցամաք ճանապարհորդել,

Սյնպէս հրաշալի դեռ «կոյս» չեմ տեսել...  
Արևելքի մէջ այնպէս գեղադէմ  
Աղջիկ չէ մտել Սուլթանիդ հարեմ,  
Դեռ չէ մնուցել Եղեմ տիրատունկ  
Սյնպէս նազելի «հասակ» մնծաշուք.  
Առատահանճար բնութեան բովից  
Դեռ ոչ որ այնպէս «պատկեր» չէ ուսել.  
Դեռ երկրային նուրբ, փափկամորթ ձեռքեր  
Սյնպէս մետաքսեայ «մազեր» չեն հուսել.  
Դեռ գարնան օրում ցօղը վաղորդեան  
Չէ թրջել այնպէս մի «վարդ» աննման.  
Դեռ Դտալական երկնում կապուտակ  
Չէ փայլել այնպէս գեղեցիկ «լուսնեակ»:  
Ա՛խ, նրա նման չըկայ, ա՛խ, չըկայ  
Գեղեցիկ «էակ» աշխարհի վրայ.  
Նա վարդի նման ծաղկել է, բացւել,  
Մանիշակի պէս մնել, մնծացել...

V



յատեղ Սալմանի սիրտը կրակ վառւեց  
Ծերի խօսքերից ու բացականչեց.  
— Հետեւեալ օրը, ծերուկ պատւական,  
Դեռ ծէգ չըբացւած, փաղ առաւօտեան,  
Կըվերցնես բանի զօրքեր զինակիր  
Եւ կուղնորւես դէպ Զալի երկիր,

Խորին յարգանքով կըներկայանաս  
 Զալհսկայի մօտ, բայց չըմոռանաս  
 Նրան իմ գովասանքը,  
 Սպա կրյայտնես իմ անեղ կամքը,  
 Թէ Պարսից հսկայ, ասում է Սալման,  
 Կամ ծովինարին տուր ինձ կնութեան,  
 Թող լինի մեր մէջ անկեղծ հաշտութիւն,  
 Կապենք յաւիտեան մի դաշնակցութիւն,  
 Որ ամբողջ աշխարհն միայն ունենայ  
 Երկու իշխողներ, երկուսն էլ հսկայ՝  
 Մին արևելքում, միւսն արևմուտքում,  
 Դու այդ աշխարհում, ես երկրի ծայրում,  
 Կամ, եթէ, ասա, չես համաձայնում՝  
 Ես քեզ կըսպասեմ ռազմական դաշտում  
 Եկ փորձենք այնտեղ մեր հսկայ ոյժեր,  
 Մինչ երբ ունենայ աշխարհն երկու տէր...

VI

 պառազինըւած, ծըստեալ չորերով  
 Բահրամ ծերունու ուղեկցութիւնով  
 Միւս օր Սալմանի զօրքեր զինակիր  
 Մտան մեր Զալի հեռաւոր երկիր  
 Նրանք հսկայի մօտ ներկայացան  
 Ու նրա առաջ բացեցին բերան.  
 — «Ահա բերել ենք մեր Սարդարից լուր»

Կամ ծովինարին ինձ «լծակից» տուր,  
 Թող լինի մեր մէջ անկեղծ հաշտութիւն,  
 Կապենք յաւիտեան մի դաշնակցութիւն,  
 Որ սաղ աշխարհը միայն ունենայ  
 Երկու իշխողներ, երկուսն էլ հսկայ՝  
 Մին արևելքում, միւսն արևմուտքում,  
 Դու այդ աշխարհում, ես երկրի ծայրում,  
 Կամ, նա ասում է, չես համաձայնում,  
 Ես քեզ կըսպասեմ ռազմական դաշտում,  
 Եկ, փորձենք այնտեղ մեր հսկայ ոյժեր,  
 Թող գնդակի դէմ խոյանան կրծքեր.  
 Բաւ է, երկու տէր աշխարհն ունենայ, —  
 Կամ ես պիտ' իշխեմ, կամ թէ միայն նա»...

VII

— Ո՞վ է ձեր Սարդար, ես չեմ ճանաչում,  
 Ո՞նց յանդնեցաք մանել իմ երկիր,  
 Դուք լրտեսներ էք, միթէ չեմ տեսնում,  
 Այդպէս շորերով ծպտեալ, զինակիր.  
 — «Նրան ճանաչել դժւար չէ, ով տէր,  
 Նա է Սալմանը, Սուլթանը Պարսից.  
 Այնպէս կարծում ես թէ մի այլ հսկայ  
 Զըկայ աշխարհում բացի քեզանից.  
 Երկրի մի ծայրում զօրքերով նստած՝  
 Չորս կողմ աշխարհի գերի է գարձրել,



Ողջ արևմտեան աշխարհին տիրած՝  
Նա ամենուրէք սարսափ է ձգել,  
Նըրա անունը հասել է ահա  
Մինչ Հնդկաստանի հեռու սահմաններ.  
Եւ Զինմաշինայ արքան զարհուրած  
Նըրա առաջը գլուխ է խոնարհել.  
Նա իր գօրութեամբ տուգանք ու հարկեր  
Թագաւորների վըրայ է դնում...  
Բոնում տանում է մեծ-մեծ կայսերաց՝  
Աշտարակների ճակտից քներում»...

VIII

— Եսդ ինչ լրբութիւն, դուք դաւանաններ,  
Կորէք աշքիցս, անմիտ լրտեսներ.  
Հինց այս բոպէիս թռչնոց կերակուր  
Կըլտարձնեմ ձեր լին — մւր կըփախչէք, մւր...  
Բուղագոռ տւեց Զալը սաստկագին,  
Ոմանց նա զարկեց ապտակներ ուժգին,  
Ոմանց անխնայ ծեծեց անտեղի,  
Դարձրեց խիստ ճարակ սրին կատաղի,  
Ոմանց ամրապինդ շղթայով գերեց,  
Նեղ բերդերի մէջ կալանաւորեց.  
Ապա բարձրաձայն կանչեց դահճապետ,  
Որ բոլորին էլ նա անէ անհետ,  
Որ բարձրացնի անարդ կախաղան,  
Կատարէ դերը գլուխ թլպատման.

Քոկ հարսնախօս խեղճ Բահրամ ծերուկին  
Վառած խարոյկի մէջը ձգեցին:

IX

**Բ**այց մի բանիսը, երբ նկատեցին  
Սյու վատ արարքը՝ մարմնով սոսկացին,  
Խսկոյն գարշեցան, վախսան շատ հեռու  
Զալի բարկացոտ տեսրից ահարկու,  
Գիմեցին մօտիկ ծովային ափեր  
Եւ մտան շուտով նաւատորմիղներ,  
Բայց մոնչաց Զալն, առաւ սարերից,  
Խռոված հոգով, այնպէս բարձրերից,  
Զգեց դէպի ծով, ժայռեր սեսպացած,  
Նաւերի յետև Պարսից թշնամեաց,  
Որ տեղաց սաստիկ մակընթացութիւն,  
Լեռնացու ահեղ ջրային հսկայ սիւն.  
Ծովի խորքերից թնդացին ձայներ,  
Օգում ցնդւեցին փրփուր ալիքներ,  
Պարսից նաւերը ջարդ-փշուր եղան,  
Ամենքը ծովում խորասուզւեցան.  
Սակայն մի հատիկ մարդ չ'ազատւեցաւ,  
Որ գէթ Սալմանին նա տանէր համբաւ,  
Թէ ինչ փորձանքի մէջ ձգեց իրանց,  
ՎԱ չէ տեսնելու զօրքի վերադարձ,  
Զալ-փահլանի սրին «կեր» եղան,  
Ամենքն էլ մահու պատիժ ըստացան...

X



ի անգամ Զալը նժոյզը հեծաւ,  
Երկար թափառեց, սար ու ձոր ըն-  
կաւ,  
Որ Պարսից հսկայ Սալմանին գտնի,  
Զէնք ու զրահով նրա հետ կռւի.  
— «ՅՇՆ ի՞նչ հսկայ է, կամ ի՞նչ ոյժի տէր,  
Որ ամենայն տեղ ահ է տարածել,  
Երկրի մի ծայրում զօրքերով նստած  
Զորս կողմ աշխարհի գերի է դարձրել.  
Ո՞վ է նա, ով, որ անուն է հանել  
Մինչ Հնդկաստանի հեռու սահմաններ,  
Եւ Զինմաշինայ արքան զարհուրած  
Նըրա առաջը զլուխ է ծուել...  
Սիսր նա ով է, որ տուգանիք, հարկեր  
Թագաւորների վրայ է զընում,  
Դահով, հրապուրքով տիրած աշխարհին՝  
Կէս մասը իրա ձեռքի տակ առնում։  
Սիսր նա ով է, որ Ծովինարին՝  
Համարձակում է առնել իրան կին։  
Հայութեան «Ակրօն, հաւատ» ուղղափառ  
Պղծել ու խախտել իր կրօվ մուրտառ...  
Միթէ շըգիտէ, որ Ծովինարի —

Ես համարում եմ — լծակից մարդի —  
Մեծագովելի և վեհ յատկութիւն  
Ահեղ մարտի մէջ միայն «քաջութիւն», —  
Եմ տէրութեան մէջ չառ եմ գոռացել  
Թէ ինձանից յետ՝ ով իմ Ռոստոմին  
Կռւում կըյալթի, նա է լինելու  
Իմ Ծովինարի արժան ամուսին...  
Նա կոյս է ծնւել և կոյս պիտ' մեռնի,  
Ոչ ոք Ռոստոմին չէ կարող յաղթել.  
Պարսից Սալմանը չուզեց, երկի,  
Իմ քաջ Ռոստոմի ոյժը ճանաչել,  
Ես Զալը լինեմ, Ռոստոմն իմ որդին,  
Կենդանի թողնեմ Պարսից Սալմանին,  
Քանի դեռ ես կամ աշխարհիս միջին՝  
Նա տիրապետի այդ իրաւունքին.  
Մինչ երբ աշխարհն նա դարձնէ աւէր,  
Ճնշի նեղելով անմեղ գերիներ.  
Ինչու երկու տէր աշխարհն ունենայ, —  
Կամ ես պիտ' իշխեմ, կամ թէ միայն նա»...

XI

Ասաց ու հեծաւ մեր արի հսկան  
Իր «Սկուլք» նժոյգ վիշապանման,  
Հրաժարման ողջոյն ամենին տւաւ,  
Ամպի փոշու պէս շատ հեռու թուաւ.

Շատ գնաց, թէ քիչ՝ այդ Աստւած գիտէ, —  
Մինչև Սալմանին մի տեղ կըդտնէ...  
Վերջապէս հասաւ մի դաշտ տափարակ,  
Հանգստանալու մի մեծ ծառի տակ:  
Եցաւ նժոյգից յոգնած, վաստակած,  
Բայց մի ժամւայ շափ միջոց չէր անցած,  
Երբ տեսաւ յանկարծ նա հեռաստանում  
Մի ծուխ թխացեալ՝ աշխարհ էր պատում.  
Իսկոյն այն կողմը դիրղի պէս թռաւ,  
Առատ թողի մէջ, ոհ, նա ինչ տեսաւ,  
Մի բարձր հսկայ, լեռնաշափ հսկայ,  
Ոչ ոք տեսած չէր այնպէս աժդահա,  
Նա դրած ունէր իր լայն բերանին,  
Որպէս մաղարա, շիրուխ ահազին,  
Ծուխը բարդի բարդ նա դուրս էր փչում,  
Իբրև գոլորշի ամպերին ցրում...  
Եւ բաղմած իրա յարմար նժոյգին՝  
Սաստիկ կատաղած խթում կողերին.  
Եւ աճեղագոչ, փրփրաւորւած  
Դէսի նա Զալը վագում էր վառւած.  
Այստեղ Զալը ահ և երկիւղ չըզգաց.  
Ելաւ անվեհեր թշնամու դիմաց,  
Եւ ձիու վըրայ նըրան բարևեց.  
Քրտնած, այլայլւած երեսին նայեց,  
Բայց նըրա ողջոյն Սալման չընդունեց,  
Այնպէս որստմամբ, ուժգին բղաւեց,  
Որ Զալի լեղին իսպառ պատառեց,

Սիրտը փուլ եկաւ, աշքերը մթնեց.  
— «Գնա, դուքս կանչիր քաջիդ Ռոստոմին,  
Թէ ահա երկրին տիրող թշնամին  
Սուր նիղակ ձեռին՝ ոազմական դաշտում,  
Կուելու համար քեզ է ըսպասում.  
Ասաց, լայն մէջքին մզրախը ցցեց,  
Զալի վզիցը բռնեց, քաշկրտեց,  
Եւ գերանահաստ, ամուր ձեռքերով  
Ոլորեց հաւի վառիկի նման,  
Մոնչող ձիու փորի տակ կապեց,  
Ապա յետ նայեց դաժան ժպիտով:  
Կրկին շատ անհոգ, հանդարտ ընթացքով  
Իր ճանապարհոր նա շարունակեց.  
Այսպէս Սալմանից Զալը յաղթահար՝  
Ետ վերագարձաւ հայրենի աշխարհ...»

XXX

**Ո**վկ չէր ճանաշում քաջ Ռոստոմ Զալին,  
Ամենքը փորձած ունէին նրա ոյժ,  
Նա մի քաջ ղեւ էր և ոչ թէ հսկայ,  
Յաղթանգամ մարմնով, զարհուրելի յոյժ:  
Նրա վեհ, վսեմ, խոժոռ կերպարանք  
Ես ինչպէս տսեմ մի բանի նման,—  
Որպէս անդնդի վըրայ կախնայող,  
Ամպեր դիզացած ժայռի տեսարան...»

— «Հայրիկ, ջան, հայրիկ, խնդրեմ ինձ ասա  
Ռազմական դաշտում քեզ ով անպատճեց,  
Ո՞վ քեզ վշտացրեց կռւում յաղթելով,  
Քո վարկը անսան գետնի մէջ թաղեց:  
Այս լինչ հսկայ է, կամ ինչ ոյժի տէր,  
Որ քեզ յանդինեց անպատիւ անել.  
Ինչու ականջդ սուր դուրս կտրեց,  
Միթէ Ռոստոմիս չուզեց ճանաշել...  
— Աւաղ, շատ խոր են ցաւերս, որդի,  
Ընկած մահճի մէջ՝ սաստիկ հիւանդ եմ,  
Գուցէ, ով գիտէ, այսպէս մտատանջ  
Աստուծոյ աջում հոգիս աւանդեմ...  
Երբ երիտասարդ-ջահէլ հասակում  
Եռում էր արին իմ երակներում,  
Ինքո քաջ հսկայ, սուրս էր կտրուկ,  
Շատ թագաւորի առնէի ստրուկ,  
Ամբողջ աշխարհը, ո՞հ, այն ժամանակ,  
Դողում էր ուժեղ իմ ոտքերի տակ.  
Բոլոր ժողովուրդ սարսում էր ինձնից,  
Ո՞վ կարէր վատ խօսը հանել բերանից:  
Իսկ այժմ... այժմ ես ծերացել եմ,  
Վաժմուն տարի է, ինչ որ ապրել եմ,  
Շուտով կըդիմեմ խաւար գերեզման,  
Թշնամուց յաղթւած, ցաւով անդարման...  
Բայց թէ ուզում ես, որդի, այս դաշտեր,  
Այս դալարագեղ մարմանդ ու սարեր,  
Այս կանաչ ըլուրք, ակունք սառնորակ,

Այս սլաղ աղբիւրներ, զրեր անապակ,  
Այս լայնածաւալ, սիզոտ հովիտներ,  
Այս ծաղկէնկար մարգագետիններ,  
Այս տափաստաններ չքեզ, աննման,  
Լինի մշտական որդոցդ օթևան,  
Եւ իմ մօտալուտ մահւանից յետոյ  
Քո հայրենական սուրբ ծուխը ծխել,  
Եւ այս աշխարհում, իմ բազկի նեցուկ,  
Անման, պանծալի փառք, անուն թողնել,—  
Ապա ձի նստիր, կայծակի նման  
Շուտով սլացիր գէպ' կուփ դաշտը,  
Խորտակած անունս վերանորոգիր,  
Ցետ առ թշնամուց իմ կորցրած փառքը...  
Գնա, դէհ, գնա, էլ մի ըսպասիր,  
Պատառիր անվախ թշնամու կուրծքը,  
Բազմաթիւ գօրքեր աջ, ձախ կոտորիր,  
Ա՛ռ դու Սալմանից իմ սրտի ոխը...  
Գնա, մի կանգնիր, արդէն Սալմանը,  
Ռաշիդ Ռոստոմիդ կանչեց կուփ դաշտ.  
Ի՞նչ ես վախկոտի պէս նստել տանը,  
Մինչ երբ դուք հեռափառ ըսպառնաք անհաշտ...  
Գնա, քաջ կացիր, բայց «աղնիւ» վարւիր,  
Քո ոյժը բազկի ցոյց տուր Սալմանին.  
Արեան դաշտի մէջ դու նահատակւիր,  
Միայն չըմատնես քրոջդ այլազգին...  
Դէհ, գնա, գնա, քաջի պէս մեռիր,  
Անպատած հօրդ վրէժը լուծիր, առ,

Աշխարհի համար արինդ թափիր,  
Մինչ վերջին շունչը՝ էլ յետ մի դառնար...  
Ես Զալը լինեմ, Ռոստոմն իմ որդին,  
Ինձ մարդ յանդզնի անպատիւ անել,  
Պարսից Սալմանը, անգնելթ Սալմանը  
Գերի, շղթայի շան պէս անվայել...  
Այս, Սալմանը, Պարսից Սուլթանը  
Հօրդ բարեին ուշք էլ չըդարձրեց,  
Չգեց մահառիթ սրի բերանը,  
Ամուր վզիցս բռնեց, քաշքեց...  
Աշխարհին անգութ, Սալման անօրէն,  
«Բանիւշ» անւանած աղբրի մօտին  
Ականջս սաստիկ սրով գուրս կտրեց  
Ու ցցեց բարձր մի ձողի գլխին,  
Ինչ է քաջագործ այդ անցքի վրայ  
Գալոց աշխարհի սերունդք յետագայ՝  
Յաւիտեան նըրա անունը յիշեն,  
Փառաբանելով «ովսաննայ», երգեն»...

XIII

— «Ճայր իմ, հայր, մի լար, ինչու ես տիսրում,  
Թափում աչքերից աղի արցունքներ,  
Քանի Ռոստոմը կենդան է ապրում՝  
Ոչինչ են ամեն դժւար արգելքներ...  
Մնաս բարով, հայր, գնում եմ ահա

Կրկին յետ բերեմ պատիւըդ ընկած,  
Դու ինձ կըտեսնես կամ ազատ՝ յաղթած,  
Կամ ամենսին շրվերադած...  
Ահա շտապում եմ դաշտ պատերազմի  
Մենամարտելու Սալմանի հետը,  
Հերիք է հեռւից ինչ ըսպառնացինք,  
Թող երկրի տէրը լինի յաղթողը.—  
Սակայն իմ «Ռաշը» շատ իմաստուն է,  
Եթէ անձկութիւն, կարիք ինձ հասնի,  
Իսկոյն ոտքերով գետին կըքանդի,  
Սանձը կըկտրի, դէս ու դէն կընկնի,  
Քթից ու բերնից հանած փոխչքով  
Սարեր ու ձորեր կըթնդացընէ,  
Նա ականջները ցից-ցից պահելով  
Աչքերի բոցով շատ դաշտեր կ'այրէ...  
Երբ նա զօռ կըտայ վրինչ քայլերին,  
Դափ ու դրափով լեռներ կըճեղքի,  
Եւ քափ-քրտինքով երկար վազէվազ  
Ճանապարհների կոշտեր կըթրչի,—  
Իմացած կենաս փորձանքի մէջն եմ,  
Վեր առ իմ զէնքեր զու այն ժամանակ  
Զիու վրայ կապիր՝ և ուր որ լինեմ  
Նա ինձ կըգտնէ դաշտում ընդարձակ...  
— «Դնաս բարով, որդիս, բայց չըմոռանատ  
Մէկ է ծանապարհ, նեղութիւն հազար,  
Դնա, անխնայ թափիր բո արեան  
Մինչ վերջին կաթիլ ու յետ մի դառնար»...

XIV

«**Պ**ուրս արի զոմից, իմ Ռաշ իմաստուն,  
Կանչեց պինդ ձայնով Ռոստոմ քաջ հսկան,—  
Ես քեզ պիտ' հեծնեմ ու պիտ' սլանամ  
Դէպի արխւնուշտ դաշտը ռազմական.  
Պրծիր, քահան ջան, պրծիր կերգարին,  
Հասիր շուտով ինձ, մեզ լայն ասպարէզ  
Պատրաստէ հեռու երկրի մի ծայրում,  
Արի, որ երթանք կուի վառ հանդէս...  
Սյնտեղ սպասում է Պարսից Սալման՝  
Աշխարհին տիրող գոռող թշնամին,  
Թող երազ կարծէ թէ Ռաշի վըրան  
Նստած՝ կարող է յաղթել Ռոստոմին,  
Դու գիտես, որ սուր պահել չըգիտեմ,  
Այլ մենակ փրփրած կոիր կըմտնեմ,  
Կոիր կըմտնեմ հոգով յիշաշար,  
Տակն ու վրայ կանեմ ամեն ինչ իսպառ...  
Ով է խելագար իմ դէմ խիզախել,  
Երբ չի կամենում իր կեանքից զրկել.  
Օ՛, Սստած շանէ, թէ որ կատաղեմ,  
Ամեն ինչ ձեռքիս աղցան կըշինեմ...  
Իսկ դու ոտքերով կըգոփես գետին,  
Քո տիրոջ նման անվախ, համարձակ

Կըխաղաս ազատ գոռ դաշտի միջին,  
Անթիւ զօրքերին կանես շանսատակ...  
Մի վախիլ, Աստւած մեր կողմն է, գիտեմ,  
Նա մեղ բարերար հրեշտակ կըդրէ,  
Հակառակ դէպքում, ես ինձ կըսպանեմ,  
Եթէ թշնամին պայտերդ պոկէ...  
Արի, իմ Ռաշ ջան, իմ քաջ քահան ջան,  
Հերիք է ինչքան մնացիր գոմում:  
Ռաշը խրինջաց գոմի ախոռից,  
Հասաւ Ռոստոմին մի ակնթարթում:  
Սև էր ու մոայլ նա գիշերւայ պէս,  
Զոյդ հնոց լինին պնչերը կարծես,  
Հասակը վսեմ, ինքը իմաստուն,  
Ազին գեղեցիկ, բաշը թաւ, սիրուն:  
Խոկոյն խլացրեց նա ականջները,  
Մօտեցաւ տիրոշ, մէջը կորացրեց,  
Թէիժէ զի պէս թուաւ նրա տէրը  
Ու արծաթափայլ թամրի վրայ նստեց:

XV

«**Մ**նաս բարով, հայր, իմ քոյր Շովինար,  
Գնում եմ ահա դաշտը ռազմական,  
Մնաս բարով իմ հայրենի աշխարհ,  
Իմ մանկութեանս քաղցր օթևան...  
Մնաք բարով և դուք հանդեր ու դաշտեր.

Դմ աղմկալի մեծ-մեծ քաղաքներ,  
Կամ դուք կըտեսնէք Ռոստոմին՝ յաղթած,  
Կամ ամենսին չըվերադարձած.  
Կամ յետ կըդառնամ ես տուն հայրական  
Յաղթութեան դրօշակ իմ ձերին բռնած,  
Կամ դուք կըտեսնէք իմ հսկայական  
Մարմինը՝ կուռւմ վիրաւոր ընկած»...  
Ասաց ու մտրակ զարկեց նա Ռաշին,  
Իսկ Ռաշը, որպէս առծիւ ահագին,  
Թռաւ երկնքի ու երկրի միջով,  
Սլաքի նման հեռու սլանալով:  
Իսկ ներքի զօրքը զարկում էր թմրուկ,  
Քարձրացնելով երգեր ու աղմուկ.  
Գնում էին խիստ փոշու մէջ կորած,  
Միայն շատն ու քիչը, այդ գիտէ Աստւած.  
Մինչև կըտեսնեն երկար ճանապարհ,  
Կըհասնեն նրանք երկրի մի ծայր,  
Ուր սպասում է դաշտում ռազմական  
Ռաշիդ Ռոստոմին Պարսից քաջ Սալման...»

XVII

Արանց ճամբի վրայ հանդիպում էին  
Հազար մի տեսակ Զանգիք, Փերիներ,  
Քաջ փահլեսաններ և շար ոգիներ,  
Եօթը զլիանի օժեր, վիշապներ,  
Քայց քաջ Ռոստոմը նրանց ամենքին՝

Վառւած, կատաղած գազանի նման  
Խիստ յարձակւելով խրկում էր հեռու,  
Որը Հնդկաստան, որը Փրանկստան...  
Մի օր նա տեսաւ երկնքի տակով  
Փախցնում էր աղջիկ ահագին մի դև,  
— Ե՛յ, ուր ես վախչում, սաստիկ ծղրտաց,  
Կանգնիր, թէ չէ քո կըհանչդի արև...  
— Դու ո՞վ ես, որ քո մի դատարկ խօսրով  
Կանգնեմ այս բարձր երկնքի տակին,  
Ի՞նչ ոյժի տէր ես, որ բղաւելով  
Ուզում ես վախցնել ինձ նման քաջին.  
Թէ չես լսել իմ քաջայաղթ անուն,  
Ականջ դիր պատմեմ, որ դու հասկանաս՝  
Ում հետ գործ ունես, ով թշւառական,  
Դհ-Մրուսի հետը, քո խելքով տհաս...  
Երբ ողջ աշխարհը լի էր հրաշքներով,  
Զար-ոգիները կոիւ էին մղում, —  
Ես այն ժամանակ Դհ-Մրուս անունով  
Ամենքի վըրայ իշխել -ի ուզում:  
Ինձ հետ վեր առայ քաջ Աքերոնին, <sup>1)</sup>  
Հեռու քշեցի չար ոգիներին.  
Հին Հայաստանը արի ոտնատակ,  
Անթիւ քաղաքներ դարձրի աւերակ:  
Ինչ տեղ, ինչ երկիր ծաւալում էի.  
Հետո էի տանում ահ, թշւառութիւն,

<sup>1)</sup> Դժոխքի մարդ:

Ես ամենուրէք տարածում էի  
Անապատական լուռ ամայութիւն...  
Սյս սիրսն աղջկան տեսնում ես ահա  
ի՞նչպէս թոցնում եմ երկնքի վլրայ.  
Սա է աղջիկը հազուք արքայի,  
Սյժմ իմ ձեռին գերի է գերի.  
— Առիր,— ներքեից ուժին բղաւց  
Արի Ռոստոմը և շըհամբերեց.  
Սյնպէս մտրակեց իր Ռաշի ազդիքն,  
Որ թռաւ, հասաւ վերև Դև-Մրուսին...  
— «Հիմա ի՞նչպէս ես, յանդուգն, ստահակ,  
Գլուխդ ջախճախեմ այս երկնքի տակ.  
Ռոստոմիս սրի առաջ ամեն ի՞նչ  
Եւ քեզ նմաններ ոչինչ են, ոչինչ:  
Սսաց, աղեղով այնպէս նա զարկեց,  
Որ քաջ Դև-Մրուսը վետինը փոււց.  
Իսկոյն շղթայով կապեց ձեռքն ու ոտք  
Ու տարաւ ձկեց դժուսքի մութ խորք,  
Որ լոյս չըտեսնէ, գուրս չըգայ աշխարհ,  
Թշւառ մարդկերանց չանէ զարիհար.  
Այլ բոցավառւած հուրում գեհենի  
Յաւիտեան տանջանք կրի, չարչարւի,  
Իսկ Աքերոնին ուրոնապահ» կարգեց,  
Աերջին երգումով խիստ պատէր տեց,  
Որ չար ովիններ ելմուտ չանեն.  
Ել շփոթ, աղմուկ չըբարձրացնեն...

Միայն «Ստիրան»<sup>1)</sup> էր ձայնով վայրագին  
Գոռում ու գոչում բամբ որոտներով,  
Վառում, կատաղում, փրփուրն երեսին,  
Ժանդ գեի նման պղաոր ջրերով,  
Իսկ դժուսքի մէջ տիրած լուռթիւն.  
Գիտեն—Ռոստոմի մեծ է զօրութիւն.  
Դև-Մրուս շղթակապ անկիւնում ընկած,  
Ծեր-Աքերոնը քընով մըռափած...  
— «Թող չար ոգիներ լինին սրիս կուր,  
Սշխարհը մնայ խաղաղ, անդուր, լուռ,  
Սովոր են ամենք հարապակ դուրս գալ  
Նսկայի անւամբ, պատերազմ բանալ,  
Ել չեն մտածում՝ թէ աւելի քաջ  
Կարող է գուրս գալ մէկն իրանց առաջ,  
Որ իրանց գլուխ ջարդ-փշուր կանէ  
Սշխարհն անփորձանք նա կըպահպանէ...»

XVII

— «Ո՞րտեղ է ապրում քո հայրը, աղջիկ.  
— «Սյս ի՞նչ» աշխարհում,—տւեց պատասխան.  
— Սրբիր աչքերիդ արցոննք ծովացած,  
Մի վախիլ, մենք քեզ կըհասցնենք նըրան.  
— Ես ի՞նչպէս սրբեմ աչքից արտասուր,

<sup>1)</sup> Դժոխքի ամենաղաբհուրելի և կատաղի գետը.

Երբ մօտ տասներկու տարիի կըլինի,  
 Ինչ որ ծնողաց երկսից զրկւել՝  
 Դե-Մրուսի ձեռին ընկել եմ գերի...  
 Բազուք արքայի աղջիկն եմ միակ,  
 Աշքի լսի պէս նա ինձ սիրում էր,  
 Թէ որ ինձ տանէք, հասցնէք նըրա մօտ՝  
 Նա ձեզ կըրախշէ անթիւ նւէրներ...  
 Նա կուրախանայ ձեր մեծահոգի  
 Դէպի ինձ արած շատ բարութիւնից,  
 Կըբանայ դռներ իր գանձարանի,  
 Կէս բաժին կըտայ իր տէրութիւնից...  
 «Ես ոչինչ չունեմ ակնկալութիւն,  
 Ինձ պէտք չեն քո հօր անթիւ բարիքներ.  
 Ինձ չեն գրաւում գանձ, հարստութիւն,  
 Սրծաթ ու ոսկի, անդին ընծաներ.  
 Սյլ իմ նպատակ՝ չար ոգիներին  
 Զարդել, վերջացնել խիստ քաջակորով.  
 Եւ վիշապներից, հսկայ-դևերից  
 Սշխարհը պահել խաղաղ, ապահով...  
 Դէհ, զօրք քաջազուն, յառաջ շարժւեցէք,  
 Բազուք արքայի մօտ աճապարենք,  
 Սուազ այս թշւառ, խեղճ, անբախտ աղջկան  
 Սուանց փորձանքի իր հօրը հասցնենք,  
 Ապա երկրի ծայր երթանք շտապով,  
 Սյնտեղ կատաղի ռազմական դաշտում  
 Նիզակ ու սրեր ձեռքում ճօճելով  
 Պարսից Սալմանը մեղ է ըսպասում...

Գնանք. դէհ, գնանք, ցոյց տանք Սալմանին  
 Մեր հզօր բազիկի ոյժը ցոյց տալով,  
 Թռղ մեր թիկունքը թշնամին վհուկ,  
 Զըտեսնէ երբէք և ոչ մի կերպով...  
 Գնանք փորձելու մեր հսկայ ոյժեր,  
 Թռղ գնդակի դէմ խոյանան կրծքեր,  
 Մինչ երբ երկու տէր աշխարհն ունենայ,  
 Կամ ես պիտ' իշխեմ, կամ թէ միայն նաւ

XVIII

— «Դէհ, արի աղջիկ, գաւակս թժոիր,  
 Բայց վախը իսպառ սրտիցդ հանիր,  
 Պիտ' թռուցանեմ բեղ ամպերն ի վեր,  
 Բայց երկնքի տակ, շատ հեռու տեղեր...  
 Սսաց ու մտրակ զարկեց նա Ռաշին,  
 Իսկ Ռաշը, որպէս արծիւ ահազին,  
 Թռաւ երկնքի ու երկրի միջով,  
 Սլաքի նման հեռու ոլանալով.  
 Իսկ ներքն զօրքը զարկում էր թմբուկ,  
 Բարձրացնելով երգեր ու աղմուկ,  
 Գնում էին խիստ փոշու մէջ կորած,  
 Միայն շատն ու բիշը, այդ գիտէ Սոտած...  
 Վերջապէս նրանք յոկնած, դադարած՝  
 Բազուք արքայի աշխարհը հասան,  
 Սյդտեղ Ռոստոմը, աղջիկը՝ քրտնած  
 Թոչկան նժոյզից կամաց ցած իջան...

Գիշերը հասաւ և կախարդական  
Թերը փռեց աշխարհի վրան,  
Որպէս մի սաւան, սաստիկ սեաթոյր,  
Ծածկեց ամեն տեղ իր մուժ վարագոյր.  
Մնջեցին ձայներ, դադարեց թմբուկ,  
Սմեն տեղ տիրեց խորին լուռթիւն...  
Ել չըլսւեցաւ երգեր ու ազմուկ,  
Սմենըն են մտել մի շատ քաղցր քունք...

XIX



արթնեց զիշերը, ծագեց վառ արե,  
Տւաւ աշխարհին ցանկալի բարե.  
Իր լուսաճաճանչ ճառագայթները  
Սփռեց աշխարհիս ամեն կողմերը.  
Զարթեց բնութիւն իր հսկայական  
Քնից, ծփելով ծովակի նման,  
Իսկ հորիզոնում ջինջ, սրտագրաւ  
Վառ արշալյուր կարմրատակեցաւ...  
Յառաջ խաղացէր, իմ զօրք քաջազնն,  
Քանի այսպիսի օր է գեղեցիկ,  
Վեր կացէր, հասնենք բազուք արքային.  
Հերիք չարշարւեց, մեկը է այս աղջիկ.  
Սսաց ու մտրակ զարկեց նա Ռաշին,  
Իսկ Ռաշը, որպէս արծիւ ահազին,

Թռաւ երկնքի ու երկրի միջով,  
Սլաքի նման հեռու սլանալով:  
Իսկ ներքի զօրքը զարկում էր թմբուկ,  
Բարձրացնելով երգեր ու ազմուկ.  
Գնում էին խփու փոշու մաջ կորած.  
Միայն շատն ու քիչը, այդ գիտէ Սստած...  
Նրանք հազար մի տանջանք կրելով,  
Սովոր քաղցր ու ծարաւ յանձն առնելով  
Վերջապէս մտան պերճ, հրաշալի  
Աշխարհը հարուստ բազուք արքայի...

XX

**Հ**ենց այդ ժամանակ զոռ բազուք արքան  
Ճողոված ունէր մնծամհծ իշխան.  
Դարբասի զբոնում զրել էր սեղան,  
Չափազանց շրեղ սարքել խրախճան,  
Իշխանների հետ քաղցր խօսելով  
Սնում էր զւարթ քեֆ, որախութիւն.  
Բայց յանկարծ լսեց թմբուկի ձայներ,  
Հեռուումը տեսաւ զօրքի բաղմութիւն.  
Նա խկոյն և եթ տեղից վեր կացաւ,  
Թողից բոլորը, պալատը մտաւ.  
— Վայ, քեզ վայ, — ասեց, — Բազուք քո զլիին,  
Հասել է հասել քո օրը վերջին.  
Գալիս են ահա Դեմրուսի զօրք

Թմբուկ ածելով, զինւած ևն բոլորը.  
Նրանք քո երկիր խսպառ կըքանդին,  
Բազուք արքայիդ գահընկեց կանեն,  
Փառք, իշխանութիւն և քո ժողովուրդ  
Ամեն ինչ կըտան շարութեան յագուրդ»...

Նա շարախնդիր, բարկացած հոգով,  
Սաստիկ մտատանջ լնկաւ մորի ծով.  
Բայց չէր իմանում իր կորած աղջիան՝  
Քաջ Ռոստոմ-Զալը բերում էր իրան.  
Փոխանակ նըրանց դիմաւորելու,  
Ճնար էր փնտում մի տեղ փախչելու:

XXI

«Ահա երեաց իմ հօր պալատը,  
«Եւ այն կանաչկոտ, սիրուն պարտէզը,  
«Ուր իմ մանկութեան օրելն ևմ անցրել,  
«Անմեղ թոշնի պէս ուրախ խաղացել.  
«Ե՛կ, զօրքից մի մարդ ուղարկենք՝ գնա,  
«Իմ տարակուսած հօրն իմացում տայ,  
«Որ իրա զօրքով ընդ առաջ վագէ,  
«Քաջ Ռոստոմ-Զալիդ նա դիմաւորէ:  
«Ե՛կ, զօրքից մի մարդ ուղարկենք՝ գնա,  
«Իմ տարակուսած հօրն իմացում տայ,  
«Թէ ահա զալիս է իր կորած աղջիկ,  
«Որի տեսութեան պիտ' արժանանայ:  
«Ե՛կ, զօրքից մի մարդ ուղարկենք՝ գնա,

«Իմ տարակուսած հօրն իմացում տայ,  
«Թէ Ռոստոմ քաջը Դև-Մրուսին յաղթեց,  
«Սնրախոտ աղջկանս ինչպէս աղատեց»...

XXII

**Ը**ռաւ սուլհանոլակ հեծած երիվար՝  
Սղըկայ հօր մօտ և խօսքով յարմար  
Պատմեց բոլորը մանրամասնօրէն  
Ինչ որ լսել էր ու գիտէր արդէն.  
Սյստեղ Բաղուրը շատ ուրախացաւ,  
Սյդ բանը, կարծես, ցնորք թւեցաւ...  
Նա չէր հաւատում իր աղջիկ կորած  
Կրկին կըլինէր իր աշխարհ եկած:  
— «Ի՞նչ ուրախութիւն կըլինի Աստած,  
Եթէ աղջիկս տեսնեմ աղատւած»...

Սաց ու վակեց անթիւ զօրքելով  
Գովարանական երգեր երգելով.  
Խսկոյն գետնաշող նա տարածւեցաւ  
Ռոստոմի առաջ խօսել սկսաւ,  
Բայց խօսել ներքին շըթովեց յուզմոնք,  
Ցայտեց աշերից բերկութեան արցոնք...  
Մի անպատճելի գաղտնի լուսութեամբ  
Ո՞հ, նրա լեզուն կապւեց, կաշկանդւեց,  
Թոթուաց սիրտը անհուն բերկութեամբ,  
Զայնը թուլացաւ ու նրան խեղտեց.

— «Ով քաջդ հսկայ, — վերջապէս խօսեց, —  
Մեծ ուրախութիւն, որ Սատուած զրկեց  
Քեզ իմ աշխարհը, իբրև բարերար,  
Բարնվ ես եկել զու, բարնվ հաղար...  
Շատ չնորհակալ եմ, որ գերութիւնից  
Դու ազատեցիր Դի-Մրուսի ձեռքից  
Իմ թշւառ աղջկան ու ինքդ բերիր  
Ինձ մօտ նեղութեամբ հեռճ տեղերից...  
Եսկ զու աղջիկ, — նա դրկախառնեց,  
Եմկոյն ջերմագին վզով փաթաթւեց, —  
Որքան սեամոլ տարիներ երկար  
Թողիր միայնակ հօրդ ջրատար.  
Դիտե՞ն, թէ քանի՛, քանի՛ զօրք անթիւ  
Ճամփին կոտորել տւի քո առթիւ,  
Ի՞նչքան նեղութիւն, տանջանք կրեցի,  
Մի կերպ Դի Մրուսին յաղթել չկարացի...  
Կեցցէ Ռոստոմը, արի Ռոստոմը,  
Նա քեզ ազատեց Դի-Մրուսի ձեռքից.  
Թող առաջ դուրս գայ ինձնից ստանայ  
Դիւղեր, բազաքներ որը կամենայ...  
— «Ո՛չ, ներողութիւն, մենք պէտք է վնանք  
Երկրի մի ծայրը, ուր կուի դաշտում,  
Սըեր ու նիզակ ձեռքում ճօճելով  
Պարսից Սալմանը մեզ է ըստասում...  
Մինչ երբ աշխարհն նա գարձնէ աւեր,  
Ճնշի նեղելով անմեզ գերիներ,  
Մինչ երբ երկու տէր աշխարհն ունենայ,

Կամ ես պիտ' իշխեմ, կամ թէ միայն նա...  
— Նախ եկէք ինձ մօտ, ուրախ ու զւարթ  
Զեզ սլատւասիրեմ մի քանի շաբաթ,  
Շատ ուրախութիւն ու քեֆեր ցոյց տամ,  
Ապա ես ինքս էլ ձեզ օգնութեան գամ...  
Թէպէտ Ռոստոմը չէր համաձայնուում  
Բազուք արքայի մօտը հիր մնալ,  
Բայց վերջը զիջաւ նրա թախանձանքին,  
Ըսկեց զինի խմել, հարբենալ...  
Այստեղ Ռոստոմին թողնենք, ընթերցնη,  
Գուցէ մեր առաջ դուրս գայ հարցանող  
Թէ ինչ եղան մեր Զալն ու Շովինար,  
Գնանիք նրանցից իմանանիք խաբար...

XXXIII

— «Տարին բոլորեց, Ռոստոմը չեկաւ,  
Հայրիկ ջան, ինչն այսքան ուշացաւ.  
Զըլինի ճամբին մի բան պատահեց,  
Պարսից Սալմանը յաղթեց, սպանեց ..  
— Ո՛չ, իմ աղջիկս, եթէ նեղութիւն,  
Եթէ մի վորձանք պատահած լինի,  
Խոկոյն կատաղած Ռաշը իմաստուն  
Սանձը կըկտրի, դէս ու դէն կընկնի,  
Քթից ու բերնից հանած փոխնչըով  
Սարեր ու ձորեր կըթնդացնի.

Նա ականջները ցից-ցից պահելով՝  
Աչքերի բոցով շատ դաշտեր կայրի,  
Սաստիկ դու կըտայ վրինջ քայլերին,  
Դափ ու դրափով լեռներ կըճեղքի,  
Քափ ու քրտինքով, երկար-վաղէվազ  
Ճանապարհների թմբեր կըթքջի,  
Եւ, ոնց որ լինի, նա մեզ կըհասնի,  
Ուստոմի մահը մեզ կիմացընի.  
Գուցէ երկրի ծայր նա գեռ չէ հասել,  
Ու Սալմանի հետ կոիւ սկսել.  
Թէպէտ, սիրելիս, մէկ է ճանապարհ,  
Սակայն գիտացիր, փորձանքն են հազար»...  
— «Յրի խոճա, հայր, խեզճ ծովինարիս  
Տեսնում ես՝ վարդը վառ-վառ թշերիս  
Սկսեց կամաց-կամաց թառամել,  
Գիօղալ աշքերիս պէծը պակասել.  
Այն օրից, երբ որ Ուստոմը դնաց  
Միշտ գիշերները մնում եմ արթուն.  
Միշտ մտածում եմ, այս նըրա վըրայ,  
Ոչ դադար ունիմ, ոչ հանգստութիւն...  
Հերիք է, հայրիկ, որքան անհամըեր  
Մենք սալասեցինք Ուստոմի դարձին.  
Մտքիս հետ ընկած երկար գիշերներ  
Հանդիստ չէ առնում գլուխս բարձին.  
Ուստոմը չեկաւ, հայր ալաշում եմ  
Թոյլ տուր ինձ, երթամ դաշտը ուազմական,  
Ինչ հոգ թէ ճամբին շատ նեղութիւն կայ,

Թող երթամ հասնեմ նրան օվնութեան»...  
— Զիմ թողալ գնաս, իմ աղջիկ սիրուն,  
Քեզ ճանապարհին փորձանք կրքերին.  
Դու կոյս ես ծնւել և կոյս պիտ' մեռնես,  
Վայ թէ քեզ բռնեն ու արևանգեն.  
— «Ոչ ոք չէ կարող ինձ մատով դիալել,  
Միթէ Ռոստոմից պակաս եմ ոյժով.  
Ով կարող է ինձ ազջիկ ճանաչել,  
Կըգնամ, հայրիկ, տղի շորերով...  
Թող պատերազմի գոռ դաշտի միջին,  
Վեհ աղատութեան լինիմ նահատակ,  
Սշապահի համար թափեմ իմ արին,  
Անհուն դարերին թողնեմ յիշատակ...  
Որ արար աշխարհ լաի, իմանայ  
Թէ հայ աղջիկը իր ոլատուի համար  
Գլուխը չի մատնիլ Պարսկին անօրէն,  
Կուղէ մահանալ մահով շարաչար ..  
— Գնա, Տէր ընդ քեզ, եղբայրդ գուցէ  
Ի՞նչ օրհասական դառն ճգնաժամում  
Սպասում լինի կարօտ օվնութեան,  
Ընկած կուի մէջ՝ իր վերջին չնշում,  
Բայց Աստած սիրէք, ինձ անտիրական  
Զըթողնէք մտնեմ սաղ-սաղ գերեզման.  
Երբ իմանամ թէ Ռոստոմը յաղթւեց,  
Պարսից Սալմանը քեզ ողջ-ողջ բռնեց...  
— Սնաս բարով, հայր, գնում եմ ահա  
Կրկին յետ բերեմ պատիւդ ընկած.

Դու ինձ կըտեմնես կամ աղատ, յաղթած,  
Կամ ամենախն չըլիբրագարձած...  
Երբ արևելքում, հայրիկ, կըտեմնես  
Սյն փայլուն աստղը գեղեցիկ վառւած,  
Իմացած լինիս Ծոստոմի հետը  
Կըլիբրագառնամ — Սալմանին յաղթած.  
Իսկ երբ կըտեմնես այն աստղը հանգած,  
Երկնքի մի կողմ յանկարծ մթնացած,  
Իմացած կհնաս, կռւի մէջ ընկանք,  
Զարաշար մահով յաւիտեան մեռանք...  
Ասաց Ծովինար և ձիուն հեծաւ,  
Հայրենի երկրից շատ հեռու թռաւ.  
Շատ ցաւեր քաշեց և շատ նեղութիւն,  
Մինչի որ երկրի ծայրը նա հանաւ...

XXIV

Պատերազմական դաշտին մօտեցաւ,  
Բայց նա Ծոստոմին տիտեսկ չըտեսաւ.  
— Ուր է Ծոստոմը, անա աղաղակեց,  
Իհչոյէս գեղեցիկ ծաղիկ թտումեց.  
Սկսեց լալով իր բախտն անիծել,  
Դաշտում դէս ու դէն ձիուն շափ գցել,  
Շատ սնք, դաշտ, բնուր ոռի տակ տւաւ,  
Բայց նա Ծոստոմին, առաջ, չըպատ.  
— Ո՞չ, Տէր իմ, Սպառած — կանչեց Ծովինար, —

Խնդրում եմ քեզնից արի հոգիս առ.  
Ահա երևաց իմ ամենաթունդ  
Թշնամու զօրքը՝ կանգնած գունդագունդ...  
Տնս ինչպէս նրանց առաջին Սալման  
Սուր, ազգու ձայնով տալիս է հրաման՝  
Թէ չըխնայէք մէկին ու միւսին,  
Սաստիկ ջարդ տւէք պիղծ գեաւուրներին...  
Քանի ինձ այստեղ նրանք չեն տեսել,  
Լաւ կանեմ, եթէ սկսեմ փախչել»...  
Ասաց ու խփեց ձիուն բարկացած,  
Զին որպէս առիւծ, սաստիկ մոնշաց  
Եւ թռաւ, անցաւ լեռներ ու ձորեր՝  
Թողնելով յետև գետեր, հավիտներ...  
— Դէհ, վագեցէք շուտ, հասէք, իմ քաջեր,  
Թամբեցէք շուտով թռչկան նժոյզներ,  
Փախաճ նա արդէն շուտ արէք, հասէք,  
Բոնեցէք, ողջ-ողջ ինձ մօտ բերեցէք...  
Ի՞նչքան գեղեցիկ աննման էր նա,  
Ի՞նչ հըրաշալի հայեացք ունէր նա,  
Հուրի կալծեցի կամ թէ հրեշտակ  
Երկնքից իջած — այնպէս գեղունակ.  
Տեսաք թէ ինչպէս լուսաւորւեցաւ  
Մի անբնական վառ կենդանութեամբ,  
Պատերազմի դաշտ, երբ նա մօտեցաւ  
Իրա գերբնական-սկերճ գեղեցիութեամբ:  
Չեզ խոստանում եմ, որ ովք քաջ դուրս զայ  
Ինձնից նա, անշուշտ, պարզի կըստանայ:

Դէհ, իմ զոշաղներ, ձիանիք նստեցէք,  
Տեսնեմ ձեզանից որըդ կըբւնէք»:  
Սկան թօթափել վրայ վազեցին,  
Սմենքը ձիեր մէկ-մէկ թամբեցին,  
Որպէս կատաղած չեր որսորդի,  
Ընկան յետեից խեղճ ծովինարի:  
Բայց ծովինարը իր արագավազ  
Նժոյգին սաստիկ մտրակ էր խփում  
Եւ անտառների, խոր-խոր ձորերի  
Վերայով անցնում, հեռու ոլանում.  
Բայց փախչող Պարսիկ ձիաւորներից,  
Մէկը՝ քիչ մնաց, որ նրան բռնէր.  
Յանկարծ երկիրը շարժւեցաւ հիմքից  
Եւ դմբդմբացին լեռներ ու ձորեր.  
Երկնքում լւեց գոռգոռոցի ձայն,  
Սշխարհս բռնեց մշուշ ու դուման,  
Եւ ֆշացրին, ինչպէս մի սև օձ,  
Մթին անտառներ, սաստիկ հողմակոծ...  
Խոկ այդ տարերի խոռվութեան մէջ  
Յանկարծ երկնքից իջաւ մի հրեշտակ.  
Մեկնեց ձեռքերը և ծովինարին  
Թռցնելով վերև՝ առաւ թիփ տակ...

XXV

— «Պէտք, ժամ է արդէն. թռէք կուի դաշտ,  
Ով անյաղթ զօրքեր իմ քաջամարտիկ,  
Սյնտեղ կատաղի խոռվութեան մէջ  
Շարժւում են անթիւ զինորւած մարդիկ.  
Ո՞հ, դուք կըտեսնէք արեան վտակներ  
Սաստիկ հոսելիս, որպէս մի հեղեղ,  
Քաջ հսկաների ընկած զիակներ  
Սրիւնաշաղաղ, խառնիխառն այնտեղ.  
Կըտեսնէք և դուք թէ ինչ անպատում,  
Նաև վայրենի երանութիւն կայ  
Սյնտեղ ամենի, արնալից դաշտում,  
Ուր ձեր անվեհեր կրծքերի վրայ  
Կըբմնեն վարդեր, վարդեր սոսկալի,  
Ուր նշանաբան ու կոխ կեանքի  
Չեր, անտարակոյս, կ'լինի փառք կամ մահ,  
Բայց դուք քաջի պէս կուեցէք անահ...  
Վախկոտութիւնը միանգամայից  
Թոնդ հեռանայ ձեր առոյդ սրտերից,  
Թոնդ Յուղայի պէս ձեր միջից կորչի,  
Ով փոքրոգութեամբ կուից կըփախչի...  
Չեր թշնամիներից եկած գնդակներ

Բոնեցէք ձեռով, էլ ետ ձգեցէք.  
 Շարժեցէք օդում շողողուն թրեր,  
 Մինչ վերջին շունչը անվախ կռւեցէք.  
 Դէհ բարձրացրէք քաջերի երգեր,  
 Զիւզիլ հնչեցէք ուզմական փողեր...  
 Ասաց Ռոստոմը, մտրակեց Ռաշին,  
 Իսկ Ռաշը, որպէս արծիւ ահագին,  
 Թռաւ երկնքի ու երկրի միջով  
 Սլաքի նման հեռու սլանալով.  
 Իսկ ներքի զօրքը զարկում էր թմբուկ,  
 Բարձրացնելով երգեր ու աղմուկ.  
 Գնում էին խիստ փոշու մէջ կորած,  
 Միայն շատն ու քիշը այդ գիտէ Աստած...  
 Միայն անխնայ այս այն քաջերին՝  
 Սաստիկ զարդ տալով հսկայ դևերին՝  
 Մի կերպ վերջապէս երկրի ծայր հասան,  
 Ուր զօրքով կանգնած Սալմանին տեսան...  
 Այստեղ վիր թողին իրանց չաղիբներ,  
 Նստան սրելու զէնք ու զբաններ...  
 Այստեղ հեռաւնը երկրի մի ծայրում  
 Բացւում էր մի լայն արձակ հրապարակ.  
 Ուր գրօշակակիր՝ երճում էին՝  
 Պատերազմական երկու մեծ բանակ.  
 Յանկարծ գուրս թռան այդ բանակներից  
 Երկու առիւծներ — Ռոստոմ և Սալման.  
 Հեծած նժոյգներ, իբրև ախոյիան,  
 Եկան կանգնեցին իրար յանդիման...

Մի քանի անգամ լայն ասպարիզում  
 Նրանք համարձակ պտոյտ արեցին.  
 Որպէս հողմային ահեղ փոթորիկ,  
 Կայծակի նման իրար վագեցին:  
 Թրերի ձայնը երկինք էր համնում.  
 Ողջ երախներից կրակ էր թափւում:  
 Քափ ու քրանքում մտած ձիերը  
 Սարձորեր էին կատաղեցնում...  
 Դաշտը ծովի պէս ալեկոծուում էր.  
 Ընկան ժայռերը լեռնահովտերում.  
 Լսելի եղան գետնի խորքերից  
 Ստորերկրեայ խուլ-խուլ որոտում...  
 Յանկարծ երկնքում երեաց մի լոյս,  
 Եւ վայրկենապէս շողողաց աշխարհ.  
 Այնտեղ բարձրունքից զեղեցիկ մի կոյս  
 Նայեց գէափ ցած գէմքով խիստ պայծառ:  
 Ո՞վ է այն կոյսը, ինչ է շինում նա  
 Սյդ խորհրդաւոր գիշերին մենակ.  
 Ինչու շողաց նա երկնքի վրայ,  
 Նորից զլաւիլը ծածկեց ամպի տակ:  
 Այս, ինչու համար զնաց, թագկացաւ,  
 Այն չընազ կոյսը նւր անյայտացաւ,  
 Իզուր... աշխարհը նորից խաւարեց,  
 Երկնքի երես ամպերով ծածկւեց:  
 Նա ծովինարն է, Ռոստոմի քոյրը,

Որ հրեշտակը վեր բարձրացրաւ.  
 Նա բնակութիւն ընտրեց երկինքը,  
 Նենգաւոր ձեռքից աղատ պահւեցաւ:  
 Բայց ուր է նայում: Նա նայում է ցած  
 Դէմի ռազմական դաշը արնալի,  
 Ուր երկու հսկայ, վրիժով լցւած,  
 Կոխւ են մղում իրար կատաղի:  
 Նա կամենում է տեսնել իր եղբօր  
 Վիճակն ու դրութիւն սրբազն մարտում.  
 Սյսպէս երինքից կոյսը մենաւոր  
 Անհանգստութեամբ դէպ՝ դաշտն է նայում:  
 Նայում է, բայց ինչ... Ռոստոմն ու Սալման,  
 Որպէս ապառաժ—դարաւոր վկայ—  
 Սհեղատեսիլ կանգնած յանդիման  
 Կուռում են, կուռում, կուռում անխնայ...  
 Բայց անյաղի մարտից նրանք ձանձրացած՝  
 Իջնում են ձիուց հանգստանալու,  
 Որ անդորրութիւն տան իրանց յոգնած,  
 Պատրաստել ոյժեր նորից կուելու:  
 Նորից երկնքի վրայ երեաց  
 Այն չընալ կոյսը, նայեց դէպի ցած.  
 — «Այս ի՞նչ ձայներ են, ի՞նչ շփոթ, աղմուկ»—  
 Ասաց, հանելով գլուխը կամացուկ  
 Ամպերի միջից: Տեսաւ այս անգամ  
 Քաջ հսկաներին ձիերից լիջած՝

Լախտը—գուրզերը ձեռներին բռնած՝  
 Զարկում են, կուռում կատաղի վառւած...  
 Զայնը թնդեցնում էր երկնի կամարներ,  
 Դմբդմբում էին վիթխարի լեռներ.  
 Սասանած ամբողջ աշխարհը վախից  
 Ուզում է, կարծես, վախչել իր տեղից:  
 — «Ո՞հ, սարսափելի կայծեր են լժուզում,  
 Զէնքերից վերև ինձ մօտիկ հասնում,  
 Զըլինի աշքըս գան կուրացնեն,  
 Կուսական դէմքս կրակով այրեն»...  
 Սսում է շուտով թագցնում գլուխը  
 Գեղեցիկ կոյսը երկնքի խորքում,  
 Իսկ ներքեւ նրա եղբայր Ռոստոմը  
 Դ սէր իր քրոջ արիւն է թափում...  
 —

Սնցան շնտ դարեր... դեռ կատաղաբար  
 Ռոստոմն ու Սալման պատերազմում են  
 Եւ սպառնում են սաստիկ դէմ իրար՝  
 Երկրի «տէր» լինել նրանք ուզում են:  
 Եւ այսպէս տարէն մի երկու անգամ  
 Նորում են կոխւ երկրի մի ծայրում,  
 Բայց իրար յաղթել չեն կարողանում:  
 Երբ Ռոստոմն, Սալմանն երկրի մի ծայրում,

Ի ըանց կատաղի կոփմն են սկսում,  
Ընկնում են ժայռեր լեռնահովտերում.  
Դողում է երկիրը, սարսում, սարսափում...

Ահա թէ ինչու է երկիրը շարժում,  
Երկնքի խորքում ծովինար խաղում...



19 APR 2013

Կանգութեաբ

ՀՀ Ազգային գրադարան



NL0568505



64 82